

## ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքի համեմատական վերլուծություն

**Բաղդասարյան Լիլիթ Լ.**

*տնտեսագիտության թեկնածու,*

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս (Երևան, ՀՀ)

baghdasaryan\_lilit@bk.ru

**Վարախանյան Սեդա Ա.**

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս (Երևան, ՀՀ)

seda-karakhanyan@rambler.ru

**Բախշյան Ելենա Ա.**

ՀՊՏՀ ֆինանսներ մասնագիտության ուսանողուհի (Երևան, ՀՀ)

bakhshyanelena@gmail.com

ՀՏԳ 336.22; EDN: QBZWFI

**Հանգուցաբառեր.** Հարկային եկամուտներ, պետական տուրքեր, պետական բյուջե, ՀՆԱ, տնտեսական արդյունավետություն

### Сравнительный анализ структуры налоговых доходов государственного бюджета РА

**Багдасарян Лилит Л.**

*Преподаватель кафедры экономической теории АГЭУ, кандидат экономических наук (Ереван, РА)*

baghdasaryan\_lilit@bk.ru

**Караханян Седра А.**

*Преподаватель кафедры управления АГЭУ (Ереван, РА)*

seda-karakhanyan@rambler.ru

**Бахшиян Елена А.**

*Студентка финансового факультета АГЭУ (Ереван, РА)*

bakhshyanelena@gmail.com

**Аннотация.** В статье рассматриваются основные источники финансовой базы, необходимой для осуществления функций государственной системы и, следовательно, для решения многих задач социально-экономического характера – налоговые доходы. Налоговые доходы служат не только интересам государственного и общинного бюджетов, но и способствуют принятию деловых решений коммерческими банками и другими организациями, осуществлению эффективной экономической политики. Основным источником доходов государственного бюджета современных государств являются налоговые доходы, обеспечение которых является основной целью деятельности налоговых органов. Следовательно, анализ изменения структуры налоговых доходов имеет как теоретическое, так и прикладное значение для разработки эффективной экономической политики.

**Ключевые слова:** налоговые доходы, государственные пошлины, государственный бюджет, ВВП, экономическая эффективность

### Comparative Analysis of Structure of Tax Incomes of RA State Budget

**Baghdasaryan Lilit L.**

*Lecturer at the Chair of Theory of Economics of ASUE, PhD in Economics (Yerevan, RA)*

baghdasaryan\_lilit@bk.ru

**Karakhanyan Seda A.**

*Lecturer at the Chair of Management of ASUE (Yerevan, RA)*

seda-karakhanyan@rambler.ru

**Bakhshyan Yelena A.**

*Student at the Department of finance of ASUE (Yerevan, RA)*

bakhshyanelena@gmail.com

**Abstract.** The article discusses the main sources of the financial base necessary for the implementation of the functions of the state system and, consequently, for the solution of many tasks of a socio-economic nature - tax incomes. Tax incomes serve not only for the interests of the state and community budgets, but also contribute to the adoption of business decisions by commercial banks and other organizations, the implementation of an effective economic policy. The main source of the incomes of the state budgets of modern states is tax incomes, whose provision is the main goal of the activities of tax bodies. Hence, the analysis of changes in the structure of tax incomes has both theoretical and applied importance for the development of an effective economic policy.

**Keywords:** tax incomes, state duties, state budget, GDP, economic efficiency


Տնտեսության կայունացման, առաջընթացի ապահովման, պետական համակարգի և սոցիալ-տնտեսական տարաբնույթ խնդիրների լուծման գործում չափազանց կարևոր դեր ունեն երկրի հարկային եկամուտները. դրանք կազմում են պետական բյուջեի եկամուտների գերակշիռ մասը: Ակնհայտ է, որ հարկային եկամուտների հավաքագրումն ուղղված է գործարարության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, տեղական արտադրության խթանմանը, ներդրումային միջավայրի գրավչությանը, ֆինանսական համակարգի մրցունակության բարձրացմանն ու պետության կողմից ընտրված տնտեսության գերակա ուղղությունների զարգացմանը: Հետևաբար, տնտեսության զարգացման և բնակչության բարեկեցության բարձրացման նախապայմաններից մեկը հարկային եկամուտների պատշաճ մակարդակի ապահովումն է:

ՀՀ տնտեսության զարգացման, հարկային եկամուտների փոփոխության վրա էական ազդեցություն են ունեցել 2020 թվականին Հայաստան ներթափանցած COVID-19 համա-

վարակը և տարեվերջին ծավալված Արցախյան պատերազմը: Հետևաբար կարևորվում է պետական միջոցների հավաքագրման արդյունավետ և օպտիմալ մեթոդների կիրառումը, ինչն էլ ընդգծում է հարկային եկամուտների կարևորությունը:

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք փաստել, որ պետական բյուջեի հարկային եկամուտները կարող են մեծապես նպաստել ռեսուրսների օգտագործման, տնտեսության և նրա առանձին ճյուղերի զարգացման, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների, այդ թվում նաև անհատ ձեռներեցների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Այս ամենը փաստում է թեմայի կարևորությունը և արդիականությունը:


**Վերլուծություն:** Ուսումնասիրելով պետական բյուջեի 2018-2020 թթ. եկամուտների կառուցվածքը, հանգել ենք այն եզրակացության, որ, 2019 թ. հարկային եկամուտների ու պետական տուրքերի մասով արձանագրվել է 16,4% աճ՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 93,5%-ը, այսպես, ճշտված ծրագիրը ապահովվել է 98,4%-ով:



**Փժապատկեր 1.** 2018-2020 թթ. պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը (մլրդ դրամ) [6]

2020 թ. եկամուտներ և պետական տուրքերը կազմել են 1385,2 մլրդ դրամ, որը 79,1 մլրդ դրամով կամ 5,4%-ով պակաս է նախորդ

տարվա ցուցանիշից և կազմում է ծրագրային ցուցանիշի 100,3%-ը [6]:



**Փժապատկեր 2.** 2018-2020 թթ. հարկային եկամուտների և պետական տուրքերի կատարողականը (մլրդ դրամ) [8]


Չնայած 2020 թվականի տնտեսության առջև ծառայած մարտահրավերներին, հատկանշական է, որ նույնիսկ պետական բյուջեի եկամուտների նվազման պայմաններում ՊԵԿ-ի կողմից անխափան ապահովվել է հարկերի հետ վերադարձի գործընթացը: Մասնավորապես՝ 2020 թ. ընթացքում հավաքագրված գումար-

ներից հարկ վճարողներին վերադարձվել է ԱԱՀ-ի գծով շուրջ 120,1 մլրդ դրամ:

2018-2020 թթ. հավաքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի, դրանց հավելանքի տեմպի, ինչպես նաև ՀՆԱ հավելանքի տեմպի վերաբերյալ ցուցանիշներն արտացոլված են հետևյալ աղյուսակում:

**Աղյուսակ 1.** 2018-2020 թթթ. հարկային եկամուտներ և պետական տուրքեր, հարկային եկամուտների ու պետական տուրքի և ՀՆԱ հավելանքի տեմպերը [6]

Ցուցանիշ	Չափման միավոր	2018	2019	2020
Հարկային եկամուտներ և պետական տուրք	մլրդ դրամ	1258.1	1464.3	1385.2
Հարկային եկամուտներ և պետական տուրքի հավելանքի տեմպ	%	8.6	16.4	-5.4
ՀՆԱ (շուկայական գներով)	մլրդ դրամ	6005.1	6551.8	6183.7
ՀՆԱ-ի իրական աճ	%	105.2	107.6	92.4
Անվանական ՀՆԱ-ի հավելանքի տեմպ	%	7.9	9.1	-5.9
Հարկային եկամուտներ և պետական տուրք/ՀՆԱ	%	20.95	22.35	22.4




**Գծապատկեր 3.** 2018-2020 թթթ. հարկային եկամուտների և պետական տուրքի հավելանքի տեմպը, անվանական ՀՆԱ հավելանքի տեմպը, հարկային եկամուտներ ու պետական տուրք/ՀՆԱ ցուցանիշը (%) [6]

Հարկման արդյունավետությունը բնութագրող և միջազգային համեմատությունների ընթացքում օգտագործվող ընդհանրացնող ցուցանիշ է համարվում հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը, որը ցույց է տալիս, թե տվյալ տարում ստեղծված համախառն ներքին արդյունքի որ մասն է բյուջեի միջոցով վերաբաշխվում պետության կողմից: Որքան բարձր է այդ ցուցանիշը, այնքան բարձր է հարկման արդյունավետությունն ու պետության կարգավորիչ դերը, և ընդհակառակը: 2019 թ. 2020թ. հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 22,35% և 22,4% , որոնք մոտ 1,4 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

2020 թ. հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 22,4%, որը


0,1 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: 2020 թ. հարկերի սահունության գործակիցը կազմել է 0,92 նախորդ տարվա 1,79-ի փոխարեն, ինչը նշանակում է, որ անվանական ՀՆԱ-ի 1% փոփոխությունը հանգեցրել է հարկային եկամուտների 0,92% փոփոխության, այսինքն՝ դարձել է քիչ էլաստիկ: Այս առումով, եթե 2020 թ. պահպանվեր նախորդ տարվա էլաստիկությունը, ապա կունենայինք հարկային եկամուտների ոչ թե 5,4% նվազում, այլ 10,5% ( $5,9 \cdot 1,79 = 1,05$ ), որն էլ համարժեք կլիներ 153,4 մլրդ նվազման փաստացի 79,1 մլրդ նվազման դիմաց: Այսինքն՝ այս ցուցանիշի համադրման տեսանկյունից, այլ հավասար պայմաններում, հարկային մարմնի ջանքերի և հարկ վճարողների օրինապահ վարքագծի շնորհիվ հարկային եկամուտների կորուստը կանխվել է 74,3 մլրդ դրամով [6]:



**Գծապատկեր 4.** 2018-2020 թթ. հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքը ըստ հարկատեսակների (%) [7]

Հարկային եկամուտների գերակշիռ մասը ապահովվել է ԱԱՀ-ի հաշվին: 2020թ. նախորդ


տարվա համեմատ ԱԱՀ-ի կշիռը հարկային եկամուտներում նվազել է 0,6 տոկոսային կետով:



**Գծապատկեր 5.** 2018-2020 թթ. ԱԱՀ-ի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, ԱԱՀ-ի հավելյալի տեսակը (%) [7]

2020 թ. ԱԱՀ-ի մուտքերը կազմել են 471,6 մլրդ դրամ, ինչը 0,6%-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: 2020 թ. ԱԱՀ-ի մուտքերից 283,8 մլրդ դրամն ապահովվել է ՀՀ ներմուծվող ապրանքներից: ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա բացասական ազդեցություն են թողել «Ռազմական դրության ժամանակահատվածում հարկային արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը: 2020 թ. ԱԱՀ-ի կշիռը հարկային եկամուտներում կազմել է 34,9%:


2020 թ. շահութահարկի մուտքերը կազմել են 148,8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 181,3 մլրդ դրամի նկատմամբ արձանագրելով 17,9% նվազում: Միաժամանակ աճ է գրանցվել ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների շահութահարկի մուտքերի գծով 1,6 մլրդ դրամով: Շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում 2020 թ. կազմել է 11%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 1,8 տոկոսային կետով [6]:



**Գծապատկեր 6.** 2018-2020 թթ. շահութահարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, շահութահարկի հավելյալի տեսակը (%) [6]

2020 թ. եկամտային հարկի մուտքերը կազմել են 411,2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0,2%-ով, ինչը պայմանավորված է եղել միջին ամսական անվանական


աշխատավարձի աճով (նախորդ տարվա համեմատ՝ 3,9% աճ), ինչպես նաև նախորդ տարվա նկատմամբ աշխատատեղերի աճով (4,3%) [9]:



**Գծապատկեր 7.** 2018-2020 թթ. եկամտային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, եկամտային հարկի հավելանի տեմպը (%) [9]

2020 թ. շրջանառության հարկի մուտքերը կազմել են 26,6 մլրդ դրամ: 2019 թ. համեմատ շրջանառության հարկի մուտքերն նվազել են 8,3%-ով: Շրջանառության հարկի տեսակարար


կշիռը հարկային եկամուտներում 2020 թ. կազմել է 2%՝ 2019 թ. համեմատ նվազելով 8,3 տոկոսային կետով: [9]



**Գծապատկեր 8.** 2018-2020 թթ. շրջանառության հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, շրջանառության հարկի հավելանի տեմպը (%) [6]

2020 թ. ակցիզային հարկի մուտքերը կազմել են 123,6 մլրդ՝ նախորդ տարվա նկատմամբ արձանագրելով 3,1% անկում: 2020

թ. ակցիզային հարկը կազմել է հարկային եկամուտների 9.1%-ը: [6]



**Գծապատկեր 9.** 2018-2020 թթ. ակցիզային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, ակցիզային հարկի հավելանի տեմպը (%) [6]

2020 թ. բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմել է 3,9%


նախորդ տարվա համեմատ նվազելով 0,2%-ով [6]:



**Գծապատկեր 10.** 2018-2020 թթ. բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, դրանց հավելանի տեմպը (%) [6]

2020 թ. ճանապարհային հարկի մուտքերը կազմել են 2,9 մլրդ դրամ, որը 17%-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Հարկային մարմինների կողմից ապահովված ճանապար-

հային հարկի տեսակարար կշիռն ընդհանուր ճանապարհային հարկում կազմել է 3,4%: 2020 թ. ճանապարհային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում կազմել է 0,2%: [6]



**Գծապատկեր 11.** 2018-2020 թթ. ճանապարհային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում, ճանապարհային հարկի հավելանքի տեմպը(%) [6]

2020 թ. այլ հարկային եկամուտները կազմել են 21,4 մլրդ դրամ, որը 2019 թ. համեմատ աճել է 20,9%-ով: Այլ հարկային եկամուտների 40,7%-ը կազմել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 42,5%-ը՝ դրոշմանիշային վճարները, 42,5%-ը՝ վերը նշված խմբերին չդասվող այլ հարկային եկամուտները [6]:

2021 թվականի պետ բյուջեի հարկային եկամուտներ և պետական տուրքերը կազմել են մոտ 1,440,136,839.5 հազար դրամ, պաշտոնական դրամաշնորհներ՝ 23,233,542.7, այլ եկամուտներ՝ 44,964,907.2, իսկ 2022թ, պետ բյուջեի նախագծով եկամուտները նախատեսվում է կազմել 1,946,236,135.6 հազար դրամ [8]: Հարկային եկամուտների մասով գլխավոր խնդիրը շարունակում է մնալ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցանկալի ցուցանիշը, ուստի առաջնային խնդիր է դիտարկվում մինչև 30%-ի հասցնել վերոնշյալ ցուցանիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ:

Ներկա պայմաններում ՀՀ տնտեսության զարգացմանը նպաստող կարևոր գործոններից է հանդիսանում հարկային վարչարարությունը, որի արդյունավետության բարձրացումը՝ որպես երկրի սուվերենության բարձրացման, գործարարության զարգացման գրավական, շարունակում է մնալ տնտեսական քաղաքականու-

թյան ուշադրության կենտրոնում և օրակարգից վերաճել գլոբալ նպատակի:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2018-2020 թթ.
2. ՀՀ 2018-2020 թթ. թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն
3. «Հարկային համակարգ» դասընթացի դասախոսության նյութեր, Կ.Ա.Միքայելյան, – Երևան 2020 թ.
4. Черник Д. Г., “Налоги и налогообложение ”. – М., 2018
5. Keynes J., The General Theory of Employment, Interest and Money, London, Harcourt Brace, 1991
6. <https://www.petekamutner.am/> (02.02.2022)
7. <http://www.parliament.am/> (02.02.2022)
8. <https://minfin.am/> (02.02.2022)
9. [https://www.armstat.am/file/article/sv\\_12\\_20a\\_142.pdf](https://www.armstat.am/file/article/sv_12_20a_142.pdf) (02.02.2022)

Տճանա/Հանձնվել է՝ 03.05.2022  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 10.05.2022  
 Принята/Ընդունվել է՝ 17.05.2022